Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Еререкшелер

Мен сені сүйемін

891.99
Ч-67

ԳԻՐԼԻՍՏՈՒՆՅԻ

08 DEC 2011

ՀԿԱ ՎԱԽ ՉՈՒՆԻՄ

(ստկեր հայ զաղթականների կեանքից)

ԹԻՖԼԻՍ 1905

09
57

891.99
Գ-67
01 JAN 2009

ԳԻՒԼԻՍՏԱՆՅԻ

ՄԿԱ ՎԱԽ ՁՈՒՆԻՄ

(Պատկեր հայ զաղթականների կեանքից)

ԹԻՖԼԻՍ 1905
Տպարան Քութաթելաձէի

20 MAR 2013

25608

Дозволено цензурою, Тифлисъ 5-го
Ноября 1905 г.

3103-48

ՄԿԱ ԵՍ ՎԱԽ ՁՈՒՆԻՄ

—

Ա.

1894 թուի Նոյեմբերի 22-ին, Երեկոյեան դէմ, դառն մտածմունքների մէջ խորասուզուած՝ տանից դուրս գալով, գնում էի ինքս էլ չիմանալով՝ թէ ուր։ Փչում էր եռեսիս աշնանային պաղ քամին եւ սրտիս վրայ կուտակուած բազմաթիւ ցաւերիս մի տեսակ զովութիւն, թարմութիւն բերում։ Զբնայելով այդ պահուն՝ դուրսը ոչ ոք չկար, ամենեքեան պատսպարուել էին իրենց տաք օդաներում,

բայց եւ այնպէս ես գրեթէ մի քանի բոպէում արդէն անցել էի մի քանի փողոցով։ Մի փողոցով անցնելիս յանկարծ մի 65—70 տարեկան ծերունի գաղթական, մերկ, բոկոտն, դողդողալով ինձ ասաց.

—Աղա՜-ջան խնդրեմ նեղութիւն քաշես Քռոյի մահլէն ինձի խրատտաս։

—Ի՞նչ գործ ունիս այնտեղ, հարցրի ես։

—Աղա՜-ջան, հէնց էս է մեր երկրէն գալս, օտար եմ, անծանօթ եմ, մարդ չեմ ճանչնար... Ասօր 18 օր է մեր երկրէն դուրս գալս, օր ու գիշեր ճամբայ կուգայի. այստեղ տեղ մը չեն տար աս գիշեր գլուխս հանգիստ դնելու մինչև էգուց... Ինձի ըսին՝ գնա Քռոյի մահլէն, հոն գիւղացիք կը բնակին, քըզի տեղ կուտան։

—Ո՞ր տեղացի ես, ափօ։

—Խնուսայ եմ, աղա։

—Ո՞ր գիւղից։

—Գովանդուկ գիւղէն, մըռնիմ քըզի։

—Արի, ափօ ջան, գնանք ինձ մօտ, էսօր դու իմ պատուական հիւրն ես, ասացի եւ տարայ ինձ մօտ։

—Նստիր։

Բեռը վայր դնելով նստեց ծերունին եւ մի դառն ախ քաշեց սրտի խորքից... «Փառք քեզ Աստուած, որ ողջ և անվտանգ հասցրիր հոս»... Կարճ և խորհրդաւոր աղօթքը մրմնջաց նա...

—Ափօ ջան, անունդ ինչ է։

—Մկրօ, քըզի մեռնիմ։

– Մկրտիչ ափօ, ասում՝ես՝ թէ էս է մեր հայրենիքէն գալս, դէ, պատմիր, եթէ քեզ նեղութիւն չի լինիլ,

ձեր երկրի դրութեան մասին։

Ծերունին յոնքերը վեր բարձրացրեց, սրբեց աչքերից հոսող աղի արցունքի կաթիլները, որոնք գլորուելով՝ անհետանում էին ճերմակ, ինչպէս ձիւն մորուսի մէջ, ու սկսեց խօսել։

—Պատմեմ քեզի, ի հարկէ պիտի պատմեմ, էլ ո՞ւմ պատմենք մը ցաւեր, դարդեր, եթէ ոչ մը աղբրանց։ Ա՛մմա իմաձ պատմեմ, ես ալ չըմ գինայ, ուրկից սկսեմ զիմ պատմութիւն...

—Օրինակ, պատմիր ձեր գիւղերից, տեսնենք ինչո՞ւ են գաղթում գալիս մեր երկիրը։

—Ա՜խ, աղա՜ջան, իմաձ ընենք, որ չգաղթենք մըր երկրէն, մըզի բան չթորգին, զմեն, զ՚են թալնեցին տարան անօրէն քիւրդերը... Ողջ մնացածներն ալ

անօթութենէ նեղեալ ցիր ու ցան եղան...

Լռեց Ծերունին, նա այլ ևս մի բառ անգամ չէր արտասանում. նրա ուշքը, միտքը ու սիրտը վաղուց էին թռել գնացել այնտեղ, որտեղ նահատակուել են իւր հարազատները...

—Ի՞նչ ըսեմ ֆալաքին...— շուրջը նայելով արտասանեց Ծերունին։ Ա՜խ ներողութիւն, աղա, ինձի կորուցի... Ա՜հ, ինչ պատմեմ քեզի, ներողութիւն կընես, աղաջան, որ դլխացաւանք պիտի տամ քեզի, զիմ պատմութիւն շատ ու շատ երկար է։

—Ասուած ողորմած է, ափո, շատ մի մտածիր։

—Մըր երկրում սով կայ, աղա, շատ տեղեր բուռ մը ալիւր չես գտներ... ներկայիս ալ խեղճ

ժողովուրդը սովից կը կոտորուի...

—Դու ասում էիր, թէ իմ դարդերից պիտի պատմեմ քեզ, դէ, պատմիր տեսնեմ գլխովդանցածը,—ընդհատեցի նրան։

—Հա՛, պատմեմ, ամմա դուն աղէկ ականջ արա՛, տես թէ ինչո՞ւ եմ քաշեր մըր երկրում։ Հայ գիտի, իմալ ծերացեր անպէտք եղեր եմ... եթէ մէկ մ՚ալ ջահէլնայի, ան՝ ատեն ես գինամ, ինչո՞ւ կընէի... Օր մը, աղա՜ջան, մըր գիւղին մօտ գտնուած Հաջի-Քոչք քիւրդ գիւղացի աւազակ Հաջի-Աբտալ իր մարդերով՝ իմ տունը չեղածս ժամանակին, մըր տան վրայ կը յարձակուի ու կը տանի հաւեր, ղազեր, եզներ, կովեր ու ամեն բան... ինձ իմաց տուին մըր տնեցիք։ Հեծայ ձին, կապեցի զիմ թուր, զիմ խանչալ, վերուցի թիֆանգս ու գացի Հաճի—Աբտալին տուն։ Աբտալ զիս տեսնելուն պէս հրամայեց իր մարդերին ձիուս սանձը բռնել, զիս իջեցնել ձիուց ու մեծ պատիւներ տուաւ։ Հացի ժամանակ պահանջեցի մըր տանից թալնած տարած բաները։ Հաջի-Աբտալ իսկոյն հրամայեց իր տան մէջ գտնուած մարդերին զիս բռնել ու ծեծել... ինչ ըսեմ ֆալաքին. ջահէլ ժամանակս մարդ կրնար ինձի մօտենալ, ծեծել։ Հաջի-Աբտալին տանը իր մարդերին լաւ մը ծեծ տուի, որը մօտեցաւ ինձի՝ անպէս թալեցի գետին, որ էսօր չէ մեռեր, տասն օր առաջ է մեռեր... Հաւար ինկաւ գիւղին մէջ. ժողովեցան քիւրդեր, զիս կապոտեցին, վայր ձգին, ծեծեցին, հանեցին վրայիս շորերը ու անպէս ճամբայ ձգին մըր գիւղը։

Օր մը, զորը, Հայի-Աբտալ իր մար-
դերով մտաւ մը տուն եւ մուր-
հակ մը ցուցնելով, որի տակը
զարկած էր մոնրը (կնիք), զոր
դատ է եղեր անօրէն բիւրտը
վրայիցս հանած չորերուս ջէրը՝ կը
պահանջէ 30 լիրա։

Ա՜յ բիւրտ,—ըսի,—ախր քը-
զի ես պարտ չեմ, ի՞մալ Աստուած
կը պաշտես դուն, որ ադպէս սուտ
մուրհակով, ինձմէ փարա կուզես։

—Տունդ տեղդ հրոյ ճարակ
կընեմ, իմալ կը համարձակուիս
տուածդ մուրհակը սուտ-հանել...
Բեր աս սհաթիս փարեքս, թէ չէ
ողջ-ողջ կայրեմ քըզի, ընտանիքդ
ու սկսեցին տունս տակն ու վրայ
ընել...

—Ճարս ինչ, ինկայ դիւղին
մէջ, ժողովեցի 30 ոսկի, տուի անօ-
րէնին ու ազատեցի ընտանիքս։ Օր

մ'ալ Խնուսայ գայմագամ Ալի ա-
ղան զիմ եղբայր բանտարկել կու-
տայ առանց պատճառի մը։ Գացի
Խնուս գայմագամին մօտը։ Խընդ-
բեցի արձակել անմեղ աղբօրս։

—Բէկ,—ըսի,—ի՞նչ է աղբօրս
յանցանքը, ըսէ ինձի, պատրաստ
եմ անոր տեղ գլխովս պատասխան
տալու։

—Գնա, Մկրօ, հանգիստ քու
տունդ,—լիրբ-լիրբ խնդալով պա-
տասխանեց գայմագամը,—դու լաւ
հայ ես... ես քու աղբօրդ հետ
գործ ունիմ։

—Ի՞նչ գործ ունիս, բէկ, ըսէ
ինձի։

—Դու չես գիտեր հա, դեռ-
ուր հայ,—պոռաց վրաս դաղան
բէկը.—աս երեք տարի է, որ
դուն աղահանքին վրայ կաշխատիս
ու ինձի բաժին չես հաներ։ Երեք

տարին, տարեկան 20-ական ոսկի որ աշխատած ըլլաս, կընէ 60 ոսկի. անոր 20 ոսկին քըզի շատ ու շատ բաւ է, իսկ 40 ոսկին ուր է, ինչու ինձի բաժին չես բերեր... հիմայ հասկցար ձեր յանցանք։

—Բէկ, խղճա՛ ինձի, որդոցս,—ընկայ ոտները,—ախր 20 ոսկի ես տարեկան աղահանքէն ի՞նչ կը բերեմ... խղճա՛, ախր ես տարին տասներկու ամիս կաշխատեմ, հազիւ 10 ոսկի ձեռքս կիյնայ, բէկ, 10 ոսկով ես ի՞մալ համ քիւլֆաթս պահեմ, համ տէրութեան հարկերը տամ, համ ալ քըզի բաժին հանեմ...

—Տարէք աս գեաւուրին ալ բանտ ձգեցէք,—հրամայեց բէկը զաբթիաներուն։

Ադ միջոցին հարուստ թիւրք մը ներս մտաւ. իմանալով դոր-

ծին եղելութիւնը, խղճաց, առաւ ինձմէ 40 ոսկու մուրհակ, տուեց իր գրպանէն 40 ոսկին գայմագամին ու ինձ աղբօրս հետ աղատել տուաւ բանտէն։ Ան տարի Մորեան գիւղացի աւազակ Դաժդին իր մարդերով վրայ տուեց մը գիւղին վրայ... մէնակ զիմանէն անօրէն քիւրտը տարեր է 5 եզ, 5 կով, 4 գոմէշ, 1 ձի... աղջկանս համար պատրաստած ջհէզը ու տան մէջ եղած բաները... սպանեցին Խարա-Զօրան հայ գիւղի հարուստ Եղիազարին, անոր եղբօր որդուն ալ կուզեն սպանել։—Մը Խնուսայ Գովանդակ, Խարա-Զօրան, Բուրնազ, Սալուորի, Ղրիմ-Ղայա հայ գիւղերը աւերակ դարձեր են. տուն-տեղ քարուքանդ ըրեր, մալը քշեր տարեր են գազան քիւրտերը... շատերին ալ

սպաներ են... մենք ունէինք շատ քաջ տղերք, որոնք կը պաշտպանէին գիւղերը քիւրտ, տաճիկ ու չէրքէզ աւազակ խմբերու յարձակումներէ. մկայ չկան, շատերը անմեղ տեղը ամբաստանուելով՝ Խնուսայ բանտերու մէջ կը տառապին... մը գիւղի քաջ մարդերէն մին, Մխոն, որ մը գիւղերը կը պաշտպանէր, չէր թողուր, որ մէկու մը մաղը պակսի, մը գի պահապան հրեշտակ էր,—անիկ ալ նահատակուեցաւ, ինկաւ անօրէն քիւրտ ու չէրքէզ աւազակներէն... հայ գիտի, եալան դիւնիա, տէս, տես իմալ մարդեր կը մեռնին... աղաջան, ըսածս Մխոն մէն մէնակ կիյնար քիւրդ աւազակներու եռանէն, համ անոնց տարած աւարը յետ կը խլէր, համ բան մը ալ աւել կը խլէր... ըշտէ ադպէս քաջ մարդ

էր Մխոն. ամմա ինչ ըրած, որ Եկմալ գիւղացի Թաղո, Սայիդ և Բադալ անուն աւազակ եղբարք չէրքէզներու հետ կուգան Գոմանդուկ ու կը քշեն տանեն Մխոի տաւարը։ Մխոն կիյնայ եռանեռէն, կը խլէ իր մալը ու կը դառնայ գիւղ. քիւրդերն ու չէրքէզները ամօթից յետ կը դառնան ու կռուի կը բռնուին Մխոին հետը. Մխոն կը սպանէ զԲատալ ու ինքը կը նահատակուի անօրէններէն։

—Մխոն ո՞ւր է սպանուել։

—Մայիսին։

—Նրա աղգանունը ինչպէս է։

—Ըռչոյենց Մխո կը կանչէինք։

—Էլ ուրիշ ինչ քաջութիւններ է արել Մխոն։

—Շատ, շատ բաներ, անոր ըրածները շատ երկար պատմութիւն է. անոր տեսնողը կը սարսէր, կը

3103-48

ZUUՌ ԱՐԽ

դողար, անպէս ժայռի պէս մարդ էր։

—Սպանողին չը պատժէց կառավարութիւնը։

Ի՞նչ, իմաձ խամ-խամ կը խօսիս, աղա, կա՛ց քըզի ըսեմ։ Քիւրդերն ու չէրքէզները համ Մխոին սպանեցին, համ ալ գանգատ տուին հայերու վրայ. կառավարութիւնը զօրք ուղարկեց Գովանդուկ գիւղ, շատ դէշութիւններ ընելէն վերջը՝ բռնեցին տարան Խնուսայ բանտը ձգեցին գիւղի երիտասարդներէն 25 հոգի։ Ադ 25 հոգու մէջ էին և Մխոի եղբայրն ու որդին։ Շատ տանջանքներու ենթարկելէ ետքը մի քանիսին արձակեցին, Մխոի եղբայրն ու որդին ալ կաշառքով ազատուեցան, ամմա Մխոի եղբայրը քանի մը օր ապրեցաւ տանը, մեռաւ...

—Է՞, ինչպէս է պատահել Մխոի սպանութիւնը, ասա։

—Թոյլ կուտաս, աղա՞ջան, անոր սպանութիւնը քեզի թարիֆ ընեմ խաղով։

—Ասա։

Զիֆտլար իստիւնդայ աթիլլեր,
Մալլարի ափարդիլեր,
Խաբար Մխոյն գեաթրդիլեր,
Ա՜խ, նէ՞ դելբմ,
Ալչալ գեալմիշ բեն գիդերիմ,
Բեն գիդերիմ.
Հէյ վախ, հէյ վախ դիւնեա,
Ֆանի ֆելաք *)։

*
* *

Մխոի աթա բինդիրդիլեր,
Մխոի դաղլարա սալդիլեր,
Խըրխըզլար օնի գեօրդիլեր,
Թիֆենքլերի դօլդըրդըլեր։

*
* *

*) Այեն տան վերջը կրկնուում է։

Հախտան դելդի բիզէ ֆերման,
Եաքդերը բու դերդիմէ դերման,
«Գամբշ-դերէ» թուտաի դուման,
Նասիբ, ղըսմեթ, ախրեթ իման։

* * *

Մխս եօրթար ֆինս ֆասի,
Դերելերդէն գելիբ սէսի,
Օդալարդան օլուբ բասի,
Միրադ կալդի քեօշկի բաղի...

* * *

Ղուրղուշուն գելբը ջեօշայ, ջեօշայ,
Մխոնըն բաշընդան աշա,
Խնուս թուտաի թեւ թամաշայ,
Ամագըմ դետաի հաշայ։

* * *

Բատալ դետի՝ գեանմէ, Մխս,
Մխս բիր նիշան վերդի,
Բատալն ջիդեարի եանդըրդի։

* * *

Զեյրքեզ բիր նիշան վերդի,
Մխոնն ջիդեարի եանդըրդի.
Խուրշիդ, օղլում, դերդիմի եանդ,

Բենի վուրան քեաֆիր չերքեզ *)։

* * *

Մխոի գաղդան գեթիրդիլեր,
Արաբայա բինդիրդիլեր.
Բին-Գեօլ սուի քեչիրդիլեր
Մաղարաղեայ ենդիրդիլեր։
Գելեն, գիդեն աղլադըլար։
Հեյ վախ, հեյ վախ դիւնիա,
Ֆանի ֆալէք, և այլն։

—Ըշտէ, աղա-ջան, ասպէս է եղած քաջ Մխոի սպանութիւնը, աս երգը թուրքերէն է, շատ երկար է, երգած է մը գիւղի հայ աշուղը. կը հասկնաս խօսքեր։

—Ըշտէ աղպէս։

—Այժմ պատմիր ինձ, ինչու ես եկել մեր կողմերը։

—Ա՜հ, ես ինչ գինամ, աղա, մկայ էս տարիքիս հէչ կիյնայ

*) Մխոն վիրաւորուելով յիշում է իւր Խուրշիդ անունով որդուն և դիմում նրան այդ երկու տողով...

Հայրենիքէն զատուիլ, չէ՞ որ հոն
են զիմ պապերու գերեզմանները...
ամմա ինչ ըսեմ Գելաքին, որ մըզի
ձգեց օտար երկիր... մըր քեամ-
բաղդ Հայրենիքում գեղեցիկ հայ
կին մը, հայ կոյս աղջիկ մը, քիւր-
դը կամ տաճիկը տեսնելուն պէս՝
համարձակ օրը ցերեկով կը քաշի
կը տանի իր հարէմ... հոն լկելէն
եաքը, ոմանց զօռով Մահմէտի
պիղծ հաւատն ընդունել կուտան,
ոմանց ալ կը սպանեն։ Ես ալ
ունիմ աղջիկ մը, ինչպէս ըսի, որ
շատ գեղեցիկ է, աղ աղջկան պի-
տի փախցնէին քիւրդեր ու տաճ-
կըցնէին, եթէ տղաս գաղտագողի
չբերեր աղջկաս աս կողմեր...
Ես ալ, զրկուած անէս, տեղէս,
մալէս, սիրելիներէս, ինկայ աս
ծերութեանս ժամանակ օտար եր-
կիր, կը փնտրեմ զանոնք։

—Ի՞նչպէս անցար։

—Շատ նեղութիւններ քաշե-
ցի, աղա, սահմանին վրայ ռուս
սակեարներ զիս քիւրդ կարծելով՝
բռնեցին «տվօյա կարապչիկ քիւրդ»
ըսին... Ես խաչ հանեցի էրեք
անգամ, ըսի վալլահ ես քրիստո-
նեայ եմ, Հայ եմ։ Չը հաւատա-
ցին ինձի, տարան իրենց մեծա-
ւորի քովն։ Ան առեն մեծաւորը
խղճաց զիս, բան մը տուեց փա-
թաթուելու, հրամայեց սոնէն վա-
ռել ու հաց բերել։ Աստուած
կեանք տայ մեծաւորին, կերայ,
կշտացայ, տաքցայ, օրհնեցի, յե-
տոյ մեծաւորի սակեարը ինձի
բերեց ճամբայ ցուցուց՝ ու ես
եկայ... Ըշտէ աղպէս, աղա-ջան,
թիւրքեր, քիւրդեր և չերքէզներ
մըզի աս օրը գցեցին...

Տիրեց կրկին խորին լռու-

թիւն, ծերունին կրկին անճնատուր եղաւ իր դառն ցաւերին։

Բ

—Վերջապէս հասանք տա-տեղ, ալ մըզի բան ըսող չի լինի. ամմա մըզի ով տեղ կուտայ սա դիշեր մըր գլուխը հանգիստ դնելու, մինչև որ տեսնենք վաղը Աստուած ի՞նչ կը անօրինէ,—ասում էր մօտ 19—20 տարեկան, գեղեցիկ, համակրելի դէմքով, վայելուչ կազմուածքով մի նորեկ գաղթական երիտասարդ իր յետևից գնացող մանկամարդ կնոջը, որը բոլորովին փաթաթուած էր ցնցոտիների մէջ, բոկոտն, իր կրծքին սեղմած մի փոքր արարած... որը անդադար լալիս, ճչում էր։

Այդ դրութեան մէջ էլ այդ թշուառ գաղթական կինը նաղելի

օրիորդի էր նմանում իր անման գեղեցկութեամբ ու վայելուչ կազմուածքով։

—Ալ վախ չունինք, աստեղ աղատ երկիր է, մընք կարող ենք մինչև անդամ բացօդեայ տեղ մը մըզի համար դիշերս անցունել. ոչ ոք կրնայ մըզի բան մ՚ ըսել...

—Դէ, ուրեմն քալէ, երթանք։

—Քալէ. մի յուսահատիր, Աստուած ողորմած է,—յուսադրեց կինը իր առջևից գնացող երիտասարդ տղամարդուն, ու պահ մի դէս ու դէն նայեց, նայեց շինութիւններին, հրապարակի վրայ դանուած կառքերին, անց ու դարձ անող տղամարդկանց ու կանանց. ուզում էր բան ասել, բայց չէր վստահանում, ուստի և լուռ հետևեց գաղթական տղամարդուն։

Քալէ... բայց... ո՞ւր երթանք, աստեղ մըր գիւղին գաղթականներէ ոչ ոք կերևայ, որ անորմէ հարցունենք աստեղին մարդասէրներու մասին. հալբաթ մըզի ալ տեղ մը կուտան, աս երեխային ցաւը ինձի բոլորովին առեր է, չըմ գինա ինչըխ պիտ եղնի ասոր դրութիւնը։

Այդ երկար ու յուսակտուր խօսակցութեանը ես ներկայ էի, նրանցից ոչ հեռու կանգնած, ամենայն ուշադրութեամբ լսում էի, և կամենալով ծանօթանալ այդ թշուառ գաղթականների դրութեան հետ՝ մօտեցայ նրանց։

—Ո՞րտեղից էք գալիս և ո՞ւր էք մտադիր գնալ։

—Էֆէնդըմ, մընք քըզի բարեսիրտ մէկն ընդունելով քովդ կայնած երկար կը զրուցէինք.

ըշտէ հասկացար ուրկէ կուգանք, ուր երթալիս ալ մի հարցուներ, որովհետև մըզի համար աս երկրին ամեն կողմը մէկ է... Հոս մըզի, կարծեմ, չարչարող, տանջող, անպատուող չի կայ... մընք ազատ ենք աս երկրին մէջ...

—Այո՛, ազատ էք. ասացէք ո՞ր տեղացի էք և ինչո՞ւ էք գաղթում։

—Մընք Խնուսայ գաւառի Գովանդուկ գիւղից ենք, էֆէնդըմ...—ու փոխանակ իմ բոլոր հարցերին պատասխանելու, երիտասարդը սկսեց լալ, հեկեկալ։

—Մի այդպէս յուսահատուիր, չէ՞ որ դու ինքդ ես ասում, որ մենք այժմ գտնուում ենք ազատ հողի վրայ...

—Ա՜խ, ի՞նչ ընեմ որ չլամ, ախր կը տեսնես աս հետս քալող

կինը,—ասոր ազատելու համար ես անէ, տեղէ, մալէ, կարողութիւնէ, ծնողներէ զրկուեցի... վա՜յ մըզի, չեմ ըսէ դեռ մըր սիրուն վաթանէ... նայէ, տե՛ս աս կինը զիմ կողակիցս է, տարի ու կէս կայ, որ մընք միացած ենք թագ ու պսակով. նայէ՛, տես թէ զիմ անմեղ անդրանիկ ճիժս ի՞նչ օրերու մէջ է... ըշտէ ատորմէ կընաս եզրակացուցնել թէ ինչը մըզի կը սարկէ թողուլ մեր Հայրենիքը, տուն տեղ ու հեռանալ օտար երկիրներ։

—Այս ի՞նչ է,—սոսկացի տեսնելով մանկան փորը պատռտաս—ո՞վ է այդպէս բարբարոսաբար երեխայի փորը պատռել։

—Ո՜հ, ա՛լ մի հարցուներ, էֆէնդըմ, ըշտէ գիտնաս, ալ ինչո՞ւ կը հարցուներս...

Իր բազմերախտ ծնողների

ՅԱՐՈՒԹԻՒՆ-ԲԷԿ ԵՒ ՄԱՐԻԱՄ

ԲԷԿ-ՅՈՎՍԷՓԵԱՆՆԵՐԻ

անջնջելի յիշատակին նուիրում է

ԵՐԱԽՏԱԳԷՍ ՈՐԴԻՆ

—Բացի տաճիկներէ և քիւրդերէ այդպիսի բարբարոսութիւն մարդ-արարածը իր նմաններուն, ան ալ անմեղ մանկանց—կընէ՞...

—Ես ցաւը մըր գլուխը բերին Ղարա-Քիլիսա կոչուած տեղում, տան մը մէջ, տաճիկ ասկեարները... Դինամս, պատճառը ի՞նչ էր,—ան է որ գիշեր տաեղը ես բոլոր ուժովս դիմադրեցի աղջիկներու, թոյլ չտուի որ անոնք մօտենան զիմ կողակցին... Ես սոսկալի ծեծ մը կերայ, անոնց ալ ուսեցրի, բայց չը թողեցի զայն... Անոնք ալ վերջը իրենց աղջուն (թոյնը) թափեցին խէղճ անասունիս վրան...

—Անունդ ի՞նչ է,—ընդհատեցի նրան։

—Մարկոս, բեղ ծառայ կողակցիս անունն ալ Դիւդրեաթ է,

քըզի աղախին։

—Հօրդ անունը ի՞նչ է։

—Մկրօ... անիկա ոչ գինայ, երկար ժամանակէ ի վեր մեզանից տեղեկութիւն չառնելով, երեւի դարդամահ եղած է կամ խելագարուած է։ Հա, էֆէնդըմ, մընք մըր գիւղին մէջ հարուստ տուն էինք, ամեն բան ունէինք. ամմա Ղ՚ուժդի անուն աւազակապետն իր մարդերով քանի մը անգամ վրայ տալով մըր գիւղին վրայ՝ զմե՛ն, զմե՛ն թալնեց տարաւ, շատ մարդեր սպանեց, շատերն ալ զրպարտութիւններու զոհ՝ գացին-ինկան յաւիտեան մութ բանտերու մէջ... Ես գեղեցիկ քոյր մը ունէի, անոր եւ այս աղախիս քրոջդ կուզէին փախցուցնել անօրէն տաճիկներ. ես ալ գիշեր մը առի զանոնք գիւղէն

փախայ. քրոջս Իզմէրանու մէջ տուի քաջ հայ տղու մը, իսկ պատիւս *) առի անցայ՝ աս աղատ երկիրը։

—Մկրտ, — յանկարծ յիշեցի Ծերունի Խնուսեցու պատմութիւնը. —հայրդ ի՞նչ տեսակ մարդ է։— Նա պատմեց ինձ այնպէս, որպէս ես տեսել էի նրան ինձ մօտ։

—Ուրեմն գնանք,—ես ձեզ համար տեղ կը ճարեմ, որտեղ դուք կարող էք հանգիստ ապրել և ձեր հիւանդ մանկանը դարման անել։

Այստեղ, սիրելի ընթերցող, թողում եմ ձեզ երևակայելու այն րոպէն, երբ ես ներս եմ տանում յիշեալ դաղթական զոյգին այն յարկի տակը, ուր մնում էր «Ծերունի Խնուսեցին», որը փոքր ինչ

*) Կոկնարկէ իր կնոջը։

կաղդուրուելուց յետոյ պիտի փնտ-
ռէր իր կորուսեալ որդիներին,
որոնց յիշելիս միշտ իր աչքերից
աղի արցունք էր թափում։

—Աստուած իմ, Աստուած իմ,
—դողդոջուն ձեռքերով գրկեց
խեղճ ծերունին իր որդուն և
հարսին,—հեռու, հեռու երազը
ինձմէ, երազիս մէջ չեմ ես, դիմ
աչուքներ դիս չեն կրնայ խ...

Երկար այդ դրութեան մէջ
էին դրանք, որ ծերունու աչքը
յանկարծ ընկաւ վրաս։

—Ա՜հ, դարձեալ դուն ես,
էֆէնդիմ, վայլահ մըր աղդը կոր-
սուելու աղդ չէ, արի, արի, որդի,
բան ունիմ քեզի ըսելու։

—Ասա։

Հիւանդ ծերունին շակուն
տեղից, նստեց անկողնու մէջ,
վառեց իր ծխամորճը ու սկսեց

ծխել։ Թանձր մխի հետ, որ տա-
րածւում էր խրճթի ամեն կողմը,
կարծես դուրս էին գալիս ծերու-
նու այրուող սրտի խորքից դառն
մտածմունքներն ու չքանում։ Նա մի
փոքր հանգստանալուց յետոյ դար-
ձաւ դէպի ինձ։

—Իմ օրերս լմնցեր են, մնա-
ցածն ալ ձրգի թող ըլայ, թող
ամենակարող Աստուած մեղաւորիս
աղօթքը լսելով օրհնէ զձեզ, եր-
կար կեանք պարգևեսցէ։

Ծերունին երկար, երկար բա-
րեմաղթութիւններ էր անում իմ
հասցէին, երբ ես թողի հեռա-
ցայ։

Մի քանի օր յետոյ լսեցի որ
ծերունին այլևս չկայ, նա՝ իր
«միակ փափագը առնելէ ետքը»
ինչպէս ինքն էր ասում, կնքեց
իր երկրաւոր կեանքը։ Մեռաւ

նաև Մարկոսի վերաւորուած մա-
նուկը։

Այնուհետև շատ անգամ պա-
տահում էի երիտասարդ Մարկո-
սին փողոցներում շտապով դէպի
նոր շինութիւնները գնալիս, ուր
նրա համար միշտ գործ կար։

—Մարկոս, —մի օր պատա-
հելով հարցրի նրան, —օրական որ-
քան ես ստանում և ո՞րտեղ ես
բնակւում։

—Աստուած կեանք տայ քը-
զի, աղա-ջան, —երեսիս նայելով
պատասխանեց նա, —փառք Աս-
տուծոյ, մկա լաւ ենք, մըզի հա-
մար օրական ըշտէ հացի փարա
Աստուած կը հասցնէ, կաշխա-
տենք։ Օրհնեալ է Աստուած, «խա-
զէինս» զիս շատ կը սիրէ, օրական
ինձի կուտայ 30 կոպէկ. ըշտէ
կապրինք մըզի համար, ո՞չ ոք մըզի

չի վերաւորիր, չի ըսեր թէ աս-
տեղէ էլ անտեղ նստէ...

Այդ սդի օրերում ի մխի-
թարութիւն իրենց այդ զոյգը
ունեցաւ մի արու զաւակ։ Մի օր
Մարկոսին, որին միշտ տեսնում
էի տխուր, մռայլ, մտածող ու
մտախոհ դէմքով, —տեսայ շատ
ուրախ.

—Խէր լինի, —հարցրի, —չը լի-
նի միտքդ փոխել ես, ուզում ես
Հայրենիք վերադառնալ։

—Ո՞չ, աղա-ջան, ասօր կինս
մըր մարած գերդաստանի ճրագը
վառեց, դարձեալ մըր տունը չէն
կեղնի հոն մըր գիւղին մէջ. կինս
մի արու զաւակ ծնաւ, անունն ալ
ասօրուանէ կնքեցինք Մկրօ (Մկըր-
տիչ)... Զը գիտես որու անունն
դրած եմ որդուս։ Մկա ես վախ
չունիմ։

— Մինչև հիմա ինչից էիր վախենում։

—Կը վախենայի որ հոս մեռնեմ անգաւակ, կողակիցս Ծայ անտէր՝ ուրիշներու դռներուն կտոր մը հաց մուրալիս, իսկ մըր ճրագը հոն—մըր երկրին մէջ յաւիտեան մարի... Ասօր կնոջս ըսի, ալ հոդ չընես Տէրը մի արասցէ, եթէ մեռնելու ալ ըլլամ, Մուկուչս քըզի կը տանի մըր երկիր... Շէն Ծայ Աստուծոյ տունը, որ մըր տխուր սիրտերը ուրախցուց։

Մարկոսը ուրիշ գաղթականների պէս չէր, նա չէր թողնում, որ իր գեղեցիկ կինը ուրիշների դռներին հաց մուրայ, նա ինչպէս իր երկրում, այ պէս էլ օտարութեան մէջ, կամենում էր պատուով մեռնել. ուստի իր կնոջը խրատում էր։

—Պետոյի աղջիկ (Պետրոսի աղջիկ), տես, դուն ուրիշ գաղթական կանանցմէ օրինակ չպիտի առնես, որոնք աստեղ անտեղ կաշխատին, կըմուրան իրենց երիկներու պէս ազատ, կըբերեն իրենց քիւլֆաթը կերակրելու... Գինաս ատոր հետևանքը ինչ կըլլա,—ըշտէ մի քանիսներին արդէն իսկ զրկուած են մըր նահապետական ամօթխածութենէ, — անքան ակամայ փչացած են, որ մինչև անգամ ոչ մի վատ խօսք անոնց չի աղդեր... Զէ, ես այդպէս բան չեմ սիրած և չեմ սիրեր, թող օրական 20—30 կապէկ ըլլայ, բաւական է մըզի, միայն թէ մըզի ըսող չըլլայ թէ «ձըր աչքի վրայ յօնք կայ»։

Եւ մեր Մարկոսը օրն ի բուն անդադար աշխատում էր, որպէս-

զի իր ընտանիքը պատուով ապրի օտարութեան մէջ ևս։

—Մարկոս, արի, ես քեզ համար մի լաւ գործ եմ գտել,—ասում էր մի անգամ անցեալ ձըմեռ *) մի մարդ,—արի, մեր եկեղեցու բագն ու ճամբան մաքրէ, սրբէ ձիւներից, քեզ եկեղեցուց վարձատրութիւն կը լինի։

—Աստուած կեանք տայ քըզի,—լսեցի Մարկոսի ուրախ պատասխանը, երբ պատահմամբ այդ միջոցին անցնում էի երկու խօսակիցների մօտից,—կուգամ, ինչո՞ւ չեմ գայ օր։

—Քեզ համար մինչև անգամ եկեղեցու մօտ ձրի օդա մէլ կը ճարեմ։

—Աստուած կեանք տայ ճժեռուդ, զաթի աս սաստիկ ձմրան պահուն ոչ տեղ ունիմ մնալու, ոչ վառելու ցախ, ոչ ալ փարա։

Այնուհետև ես ամբողջ ձմեռուայ ընթացքում տեսնում էի այդ հայրենազուրկ երիտասարդին եկեղեցու բակի ու ճանապարհի ձիւները մաքրելիս։

—Ծ՛ռ, ինչու այսպէս ուշ ես սկսել մաքրել եկեղեցու բակը,—մի անգամ եկեղեցու դրանը նկատեց մի ծերունի քահանայ,—հիմա ո՞նց ես, գլուխդ կը ջարդես այս գաւազանովը... Լակո՛տ, քեզ ո՞վ է վարձել. փո՛ւչ գաղթականներ, գալիս են այստեղ մեր հացը ուտում են, եկեղեցուց վարձ են ստանում, չեն էլ ուզում ժամանակին իրենց գործը անել։

—Փառաւորիս, տէր հա՛յր, ծառայ եմ սուրբ աջիդ,—ցախա-

*) Առաջի ձմեռն էր, որ նա անց էր կացնում Կ....

ՀԵԼԸ վայր դցելով գետնին՝ վազեց մեր Մարկոսը դէպի զառամեալ տէր հայրը՝ ըստ հայկական նահապետական սովորութեան՝ նրա ձեռքը համբուրելու։

—Կորիր, անպիտան, տեսնում ես էս գաւազանը, շան ծընունդ, քեզ բան եմ հարցնում, պատասխանիր.—ո՞ր տեղացի ես և ո՞վ է քեզ վարձել։

—Խնուսայ եմ, շփոթուած պատասխանեց երիտասարդը.

—Ո՞ր գիւղից։

—Գովանդուկայ։

—Հա՜, գիտեմ, ձեր գիւղը աւերուած է, ձեր գիւղացիներից շատերն եկան այս կողմերը. ե՞րբ ես եկել, կնիկ ունե՞ս։

—Փառաւորիս, տէր-հայր, ունեմ, 2—3 ամիս կայ գալս։

—Ո՞րտեղ կը մնաք։

—Եկեղեցու մօտ տեղ մը մըզի բարի մարդեր տուած են, ըշտէ հոն կը մնանք, ձըր սայեցէն ալ կոտոր մը հաց կուտենք։

—Ծ՜ օ, որ մեր սայեցէն հաց կուտէք, ինչո՞ւ ժամանակին չես աշխատում, մաքրում, իստրկում վիզդ դոմշի վզի կը նմանի։

—Փառաւորիս, տէր-հայր, ասոր երկրորդ անգամն է որ կը սրբեմ ձիւնը, չէ՞ որ ասոր ողջ օրը ձիւն կը տեղայ, բակը կը լեցնէ... պատասխանեց Մարկոսը ու վերցնելով դլխից քոլոզը՝ մօտեցաւ տէր-հօր աչն առաւ։

Ես հիացած մնացի այդ բաղդաղուրկ հայաստանցու համբերութեան, երկիւղածութեան ու բարեպաշտութեան վրայ։ Եւ ահա մի քանի րոպէից մեր տէր-հայրը մոռանալով իր քստմնելի վար-

մունքը՝ խաղաղ սրտով եկեղեցում ժամն էր օրհնում, «Հայր-մերն» առում, իսկ նրա ետևը, մի սեան տակ կանգնած ջերմեռանդութեամբ աղօթում էր, ծունր էր դնում Մարկոսը՝ արդէն մոռացած այն ամենը, ինչ որ կատարուել էր մի քանի րոպէ առաջ։ Նա մրմնջում էր աղօթքներ, նա դրագէտ էր, ուսել էր իրենց գիւղի խալիֆայ-քահանայի մօտ, նրանից սովորել էր «հնազանդ լինել իրենց հոգևոր հայրերին»...

Ժամաւորները դուրս եկան եկեղեցուց, դուրս եկաւ նաև ծերունի քահանան, և տեսնելով դարձեալ Մարկոսին բակում աշխատելիս հարցրեց.

—Ծ՛ռ, օրական քեզ ինչ է տալիս եկեղեցական գումարից։

—10 կապէկ, ծառայ եմ

սուրբ աղիդ, չէն ճնայ ազգի տունը,—եղաւ երիտասարդի պատասխանը։ Նա կրկին անձնատուր եղաւչ իր գործին, որ այդ փառքից զրկուի։

Այնուհետև պատահում էի շատ անգամ ձմեռը Մարկոսին բահ ու քլունգն ուսին դրած՝ դէպի հայոց գերեզմանոցը գնալիս։ Բայց նրա առողջ կազմուածքը երկար չդիմանալով այդ տաժանելի ֆիզիքական աշխատանքին, մի օր ես տեսայ նրան դէպի «հիւանդների ընդունարանը» գնալիս։ Սակայն այդ անգամին նա երևաց ոչ թէ այն առոյգ, հաստաբազուկ, քարի կազմուածք ունեցող Մարկոսը, այլ տասնեակ տարիներով հիւանդութիւն քաշած մի մարդ, որը աւելի նման էր կմախքի՝ քան թէ կենդանի մարդու։

—Այդ ինչ ես դառել Մարկոս, ինչու՞ ես հիւանդացել, հարցրի ես նրան։

—Ես ալ չըմ գինա, աղաջան, ուրկից եկաւ զիս դտաւ սա անիրաւ ցաւը, որ զիս ահա ամիս մէ կը տանջէ։

Իսկոյն և եթ ամբողջ մարմնով սարսուռ անցաւ, այլ ևս չկարողացայ ինձ զսպել, տեսնելով խեղճ դաղթական երիտասարդին անյուսալի դրութեան մէջ, որը կարծես աղերսում էր ինձ օգնել իրեն, ազատել այդ անդութ ցաւի ճիրաններից։

Բժշկի քննութիւնից երևաց, որ այդ երիտասարդը վատ սննդի, բնակարանի ու անչափ աշխատանքի պատճառով անբժշկելի ցաւի էր տիրացել, ուստի և աղատուելու համար հարկաւոր էր լաւ պայմաններ

ներ մէջ դնել նրան, յարմար բնակարան էր պէտք, լաւ ուտել, լաւ խմել, լաւ հագնել և, որ ամենագլխաւորն է, տաք կլիմայում ապրել, որոնցից և ոչ մէկը չունէր նա։

Վերջապէս երկար տատանուելուց յետոյ, Հայոց Բարեգործական Ընկերութեան տեղական ճիւղի հաշուով Մարկոսը իր վերջին հրաժեշտը տալով իր ընտանիքին մտաւ զինուորական հիւանդանոցը...

—Մնաս բարեա՜ւ, Պետոյի աղջիկ, արտասուախառն աչքերով դիմեց իր կնոջը, որ քար էր կըտրել տեղն ու տեղը,—մնաս բարեա՜ւ, սիրելի Մուկուչ, նամուսով զաւակ ըլլաս, մօրդ պատիւը ճանչնաս, մօրդ չթողես սա օտար երկրին մէջ, որ ա՜խ քաշելով հոս մեռնի... Այսպէս խօսեց նա երբ

երկու գաղթականներ իր ձեռքների վրայ դուրս էին բերում նրան խրճիթից՝ կառքով հիւանդանոց փոխադրելու համար։

—Պետոյի աղջիկ, հազիւ լսելի ձայնով շարունակեց նա, մո՛տ արի, բեր զաւակս... Մուկուչ, ծո՛, նամուսով զաւակ ըլլաս, հօրս մարած օջախը չէն ընես, անոր երդիքէն դարձեալ ծուխ ելլէ... իսկ դու, Պետոյի աղջիկ, դուն ու քու Աստուածը, զիմ նամուսը, թասիբը, պատիւը դեռնովը չզարնես. նայէ, տես թէ ինչպէս եմ քաշեր՝ քո պատիւը, որ իմս ալ է, պաշտպանելու համար,—զայն որ մեծ զոհողութիւններով ձեռք բերած եմ, հեշտ ու աման գնով ձեռքէ բնաւ տալու չէ... Ալ մնացածը դու գինաս, մնաք բարով... Հայ երբ Երկիր երթաս՝ զիմ կողմանէ

շատ բարև կընես բարեկամներուս։

Մի քանի օր յետոյ եկեղեցում տեսայ մի շատ հասարակ փայտից շինած դագաղ, շուրջը գաղթական կանայք ու տղամարդիկ, որոնք բոլորն էլ աղի արցունք էին թափում ջահել ջիւան Մարկոսի անշնչացած դիակի վրայ։ Նրանց մէջ ես ճանաչեցի խեղճ երիտասարդի այրիացեալ կնոջը, որը համարեա խելագարուել էր...

Այդ բոպէին բերին և մի մահացած երեխայի դիակ ու տեղաւորեցին Մարկոսի գրկում. դա մի ուրիշ գաղթական կնոջ զաւակ էր. մայրը ողբում էր որդու կորուստը։

—Մարկոս, լաւ, զիմ որդուս լաւ ըշկէ, պահպանէ, եթիմ է, հար չունի, մար չունի քովը։

Ցուղարկաւորները մօտեցան

դադաղին, ուզում էին վերցնել, որ յանկարծ Մարկոսի խեղճ այրին գրկեց դադաղը։

— Մարկոս-ջա՜ն, ախր դու բերեր ես քո «պատիւը» քո երկրից հոս, աս օտար երկիրը, կը թողգիս կերթաս զանիկա... Տա՜ր ղուրբան քըզի, հետդ պատիւդ ա՜լ ուր որ կերթաս... Թող հետդ ըլլամ, մի մերժիր խնդիրս, ի սէր մեր ամուսնութեան... չէ՞ որ պատուոյդ վրայ կը դողայիր կենդանութեանդ ատենը, ո՞ւմ կը թողուս... Անդամ մ՚ալ խօսիր, անուշիկ երիկս, ախր ինչո՞ւ լռեր է քո բլբուլ լեզուդ...։

ՎԵՐՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿ ԱՖՄ
Ա. Մ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0339268

Q 5608